600.0176.19.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2017 թվականի №176Ա
քաղ. Երևան

«ԵՂՎԱՐԴ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը, համաձայն որի՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), համաձայն որի՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվության (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ն է,

գ) որ «ԵՂՎԱՐԴ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2016 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2017 թվականի ապրիլի 19-ին,

դ) որ Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2017 թվականի ապրիլի 21-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի ՆԱԲ-968Ֆ գրությամբ,

ե) 2017 թվականի մայիսի 2-ին Հանձնաժողով ներկայացված Ընկերության N37 գրությունը, որով Ընկերությունն ըստ էության ընդունել է խախտման փաստը և հայցել Հանձնաժողովի ներողամտությունը,

զ) որ Ընկերության կողմից Հաշվետվությունները սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողով չներկայացնելը խոչընդոտում է Հանձնաժողովի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը,

է) որ Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում հաստատվել է Ընկերության կողմից Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստը և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԵՂՎԱՐԴ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախազգուշացնել:
2. «ԵՂՎԱՐԴ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
19 մայիսի 2017թ.